Արձանագրություն N 1

<<ԵՊՀ-ԲԸԱՀԾՁԲ-17/53>> ծածկագրով բանակցային ընթացակարգը առանց հայտարարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 ապրիլի 2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝ հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Ղարիբյան
անդամներ՝ Ռ. Գրիգորյան, Ա. Մարտիրոսյան,
քարտուղար՝ Ա. Մակարյան

1. **Հայտերի բացման մասին**

(Ա. Ղարիբյան)

1. Ընդունել ի գիտություն,որ՝

1.1 հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցների			
	Գնային առաջարկները /առանց ԱԱՀ/			
	<<Ասատրյանս>> ՍՊԸ Ք.Երևան 0010, Նալբանդյան 48/1,5հ., 060532323	<<ԹՄ Աուդիտ>> ՓԲԸ Ք. Երևան, Պարույր Սևակի 8, տ.136 060607080	<<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ Ք. Երևան 0010, Հանրապետության 22, 010544307	<<Էյ-Էմ-Էյչ-Աուդիտ>> ՓԲԸ ՀՀ, ք. Երևան 0023, Արշակունյաց պող. 2, գր.315 091883010
1	330000	1833333	3250000	1991000

1.2.մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան

1.3. մասնակիցների գնային առաջարկում պահանջվող փաստաթղթերը առկա են, որոնք կազմված են սահմանված պահանջներին համապատասխան.

1.4. ելնելով այն հանգամանքից, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության գնային առաջարկի և նախահաշվային գնի գնային տարբերությունը չափազանց մեծ էր, որը խելամիտ չէ նման ծավալուն և հատուկ նպատակի աուդիտի իրականացման համար, ինչպես նաև աուդիտի իրականացման համար պարտադիր է Տեմպուս ծրագրերի հետ աշխատանքային փորձառություն ունենալու պայմանը, ուստի հանձնաժողովը որոշում կայացրեց մինչև հաղթող ճանաչելը գրավոր գրությամբ ճշտել վերոգրյալ պայմանների համապատասխան լինելու հանգամանքը, որը բխում է գնման ընթացակարգի հրատապությունից /գրությունը կցվում է/: Գրությանն ի պատասխան <<Ասատրյանս>> ՍՊԸ-ն ներկայացրել է ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ-ի կողմից աուդիտի ենթարկված կազմակերպությունների ցանկը.

- Եվրամիության կողմց ֆինանսավորվող ծրագրերի աուդիտ՝ «Շվեյցարա-Կովկասյան ակադեմիական ցանց» ծրագիր

- Եվրամիության կողմց ֆինանսավորվող ծրագրերի աուդիտ ՝ <<Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն>> Հիմնադրամը

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան Հիմնադրամ

1.5. <<Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3 պայմանագրերից ծրագիր է հանդիսանում միայն «Շվեյցարա-Կովկասյան ակադեմիական ցանց» ծրագիրը, որը

չի համարվում Եվրոմիության կողմից ֆինանսավորվող Տեմպուսի ծրագիր, ուստի հանձնաժողովը որոշում կայացրեց <<Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

1.6. Երկրորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությանը՝ <<ԹՄ Աուդիտ>> ՓԲԸ-ին խնդրում ենք Տեմպուս ծրագրերի հետ աշխատանքային փորձառություն ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը ներկայացնել մինչև 26.04.17թ-ի ժ.15:00-ը՝ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ա. Ղարիբյան

անդամներ _____ Ռ. Գրիգորյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____

քարտուղար՝ Ա. Մակարյան